



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ  
HELSINKI CITIZENS' ASSEMBLY  
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի  
Հանրապետություն, Վանաձոր  
Տիգրան Մեծի պողոտա 59  
59 Tigran Metsi st.  
Vanadzor, 2021, Republic of Armenia  
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68  
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36  
E-mail: [info@hcav.am](mailto:info@hcav.am)  
Ե/2021 - 09.02/72  
09.02.2021թ.

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ՝  
Արարատ Միրզոյանին

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

2021թ. հունվարի 25-28 Ստրասբուրգում տեղի ունեցած ԵԽԽՎ ձևեռային նստաշրջանի աշխատանքներին, ի թիվս Հայաստանի Հանրապետության պատվիրակության մնացյալ անդամների, առցանց եղանակով մասնակցում էին նաև ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյանը և Նաիրա Զոհրաբյանը: Ինչպես տեղյակ եք, պատվիրակության առաջնահերթ խնդիրը այս նստաշրջանում Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության նկատմամբ սանձազերծված պատերազմից տուժած ռազմագերիների, անհայտ կորածների և զոհվածների իրավունքներին վերաբերող խնդիրների և դրանց լուծման հարցերի բարձրաձայնումն էր: (Կից՝ աղբյուրի էլեկտրոնային հղումը<sup>1</sup>)

Մինչդեռ, Հայաստանի և Արցախի համար այս կարևորագույն խնդրի բարձրաձայնմանը և որոշակի հարցերով հանգուցալուծմանը հասնելու փոխարեն ՀՀ պատվիրակության անդամներ հանդիսացող ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյանը և Նաիրա Զոհրաբյանը իրենց ասելիքը այս նստաշրջանում հիմնականում ուղղել էին «Բաց հասարակության հիմնադրամներ»-Հայաստան գրասենյակի գործունեության դեմ՝ կեղծ պնդումներով, ժողովրդավարական և իրավական պետության սկզբունքները ոտնահարող մոտեցումներով և դիրքորոշումներով:

Այսպես, ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյանը իր ելույթում նշել է.  
*«...Բոլորին է հայտնի, որ նեոլիբերալիզմի և գլոբալիզմի գաղափարները*

<sup>1</sup> [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=13640&year=2021&month=02&day=02&lang=arm](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=13640&year=2021&month=02&day=02&lang=arm)

գործնականում կյանքի կոչելու համար աշխարհում տասնյակ տարիներ ի վեր հայտնի է այսպես կոչված «Բաց հասարակության հիմնադրամը» կամ այլ կերպ ասած՝ Սորոսի հիմնադրամը: Այս հիմնադրամը աշխարհի տարբեր երկրներում ֆինանսավորում է հասարակական, իրավապաշտպան և այլ կազմակերպությունների: Սորոսի հիմնադրամի գումարներով բազմաթիվ երկրներում տեղի են ունեցել իշխանափոխություններ և հեղաշրջումներ, ազգային արժույթները տապալվել են, որի հետևանքով շատ երկրներում ծաղկել է աղքատությունը: Խոսքը գնում է տասնյակ և հարյուր միլիոնավոր դոլարների մասին»: «...Որպես ԵԽԽՎ հայաստանյան պատվիրակության անդամ՝ պետք է ասեմ, որ 2018թ. մեր երկրում տեղի ունեցած հեղափոխության իրականացման գործում նույնպես մեծ և վճռական դերակատարություն ունեցան այսպես կոչված «սորոսականները», որոնք տարիներ շարունակ ձևավորել էին իրենց ցանցը՝ իրավապաշտպանների, ՋԼՄ-ների և մի շարք հասարակական կազմակերպությունների միջոցով՝ ստանալով ընդհանուր առմամբ տասնյակ միլիոնավոր դոլարներ: Փոքր չափերով Հայաստանում մի քանի տասնյակ միլիոն դոլարի ներդրումը հանրային կյանքի տարբեր բնագավառներում ունեցավ վճռական ազդեցություն: Օգտագործելով նախկինների բացթողումները և սոցիալական խնդիրները, արդարության դեֆիցիտը՝ նրանք ժողովրդի դժգոհությունն օգտագործեցին ապագային քաղաքականության իրագործման համար: Այժմ էլ ՀՀ-ն անվտանգային առումով լուրջ խնդիրներ ունի: Մեր պարտության պատճառներից մեկն էլ այն է, որ սորոսական գաղափարախոսությունը և դրա գործնական իրականացումը հակասության մեջ մտավ և ջարդեց ազգային արժեհամակարգի ողնաշարը մեր երկրում: «...2020թ. սեպտեմբերի 27-ից սկսված 44-օրյա ադրբեջանաթուրքական ագրեսիան Արցախում իրական ցեղասպանություն էր: Մենք ունեցանք հազարավոր զոհեր, 10 հազարից ավել վիրավորներ, խեղված ճակատագրեր: Եվ որքան էլ մեր երիտասարդ զինվորների, փորձված աշխարհագորայիների ազգային ոգին բարձր է, սակայն ապագային և սորոսական գլոբալիստական կառավարման

համակարգը կախված էր մեր հերոսների ոտքերից՝ որպես քար»: (Կից՝ աղբյուրի էլեկտրոնային հղումը<sup>2</sup>)

ԵՄԽՎ նստաշրջանում ելույթ ունենալու և Հայաստանի համար օրհասական նշանակություն ունեցող կարևորագույն հարցերի ներկայացման իր հնարավորությունը օգտագործելով նույնաբովանդակ կեղծիքներով հանդես է եկել ՀՀ ԱԺ ԲՀԿ խմբակցության մեկ այլ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը, ով նույնպես ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցածը, ստեղծված բոլոր խնդիրները ամբողջովին կապում և պայմանավորում է «Բաց հասարակության հիմնադրամներ»-Հայաստան գրասենյակի գործունեության հետ, քանզի վերջինիս ելույթի ընդհանուր բովանդակությունն էլ կայանում է հետևյալում. «Մենք աշխարհի բազմաթիվ երկրների օրինակներով տեսանք, թե ինչպես Սորոսի մետաստազները քանդում են տվյալ երկրի արժեքային համակարգը, եկեղեցին, ընտանիքը, հասարակությունը քաժանում են սեւերի ու սպիտակների, թուլացնում են այն երկրի ազգային իմունիտետը, որտեղ կարողանում են գավթել իշխանություն կամ իշխանության մեջ մաս ունենալ: Եւ հիմա նույն ծրագիրը փորձ է արվում իրականացնել Ռուսաստանում եւ այնպիսի սորոսական դրածոների միջոցով, ինչպիսին Նավալնին է՝ ներթափանցել Ռուսաստան եւ Ռուսաստանը գրկել իր արժեքային համակարգից և պաշտպանական իմունիտետից, ինչպես Սորոսի մետաստազները արեցին Հայաստանում»: (Կից՝ աղբյուրի էլեկտրոնային հղումը<sup>3</sup>)

Փաստացի ստացվում է, որ ՀՀ-ի կողմից ԵՄԽՎ պատվիրակված ԱԺ պատգամավորներից ոմանք, մոռանալով այդ նիստին գտնվելու իրենց իրական առաքելության մասին, ուղղակիորեն զբաղված են «Բաց հասարակության հիմնադրամներ»-Հայաստան գրասենյակի գործունեության վերաբերյալ հեյրուրանքներ, ապատեղեկատվություն և զրպարտանք տարածելով, միջազգային այդ կարևորագույն հարթակից ՀՀ-ի և Արցախի համար շատ ավելի օրհասական

<sup>2</sup> <https://personanews.am/article/lurer-hayastanic-hima-evropan-navalnu-hamar-axmuk-e-bardzracnum-isk-arcaxi-turq-adrbejanakan-cexaspanutyune>

<sup>3</sup> <https://a1plus.am/hy/article/391885>

նշանակություն ունեցող հարցեր բարձրացնելու և դրանով իրենց՝ այդ հարթակում առհասարակ գտնվելու իրավունքը արդարացնելու փոխարեն:

Այսպիսով, ոտնահարելով իրավական և ժողովրդավարական պետությանը հարիր արժեքներն ու սկզբունքները, ԵԽԽՎ նստաշրջանում, իբրև հայ ժողովրդի ձայնը և խոսքը ներկայացնող պատվիրակներ, վերջիններս հնչեցնում են ՀՀ-ում արդեն երկար տարիներ գործունեություն ծավալող հիմնադրամի հասցեին արտահայտություններ, որոնցով ուղղակիորեն փորձում են ակնհայտ կեղծ, մտացածին իրականության մեջ որևէ հիմք չունեցող փաստարկներով ստվերել տարիներ շարունակ մարդու իրավունքների պաշտպանության, հաշվետու և թափանցիկ կառավարման, ժողովրդավարական ինստիտուտների հզորացման ոլորտներում Բաց հասարակության և նրա հետ համագործակցած հասարակական կազմակերպությունների ծավալած լայնամասշտաբ գործունեությունը:

Այսինքն, ՀՀ օրենսդիր մարմնի ներկայացուցիչները, որոնք որպես պաշտոնատար անձինք պարտավոր են հանդես գալ իրավական ու ժողովրդավարական պետության սահմանած արժեքները պահպանողի և երաշխավորի դիրքերից, նույն արժեքների հիման վրա ստեղծված և այդ նույն արժեքների պաշտպանության և իրականացման համար գործող միջազգային միջպետական կազմակերպությունում՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում, ներկայացնել ՀՀ-ն որպես մարդու իրավունքների հանդեպ հարգանք երաշխավորող պետություն և հասնել ՀՀ-ի քաղաքացիների իրավունքների պաշտպանության դիրքերից, հանդես են գալիս ՀՀ քաղաքացիների իրավունքները, ժողովրդավարական ինստիտուտները ոչնչացնող դիրքերից, իրենց ընդամենը մի քանի բուպեանոց իրենց ելույթներով հանդես են գալիս Եվրոպայի խորհրդում այդ կառույցի հիմնական փաստաթղթի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքների և նրանց երաշխավորող միավորումների դեմ:

Սրա համատեքստում «Մեր պարտության պատճառներից մեկն էլ այն է, որ սորոսական գաղափարախոսությունը և դրա գործնական իրականացումը

հակասության մեջ մտավ և ջարդեց ազգային արժեհամակարգի ողնաշարը մեր երկրում», «Սորոսի մետաստազները քանդում են տվյալ երկրի արժեքային համակարգը, եկեղեցին, ընտանիքը, հասարակությունը բաժանում են սեւերի ու սպիտակների, թուլացնում են այն երկրի ազգային իմունիտետը, որտեղ կարողանում են զավթել իշխանություն կամ իշխանության մեջ մաս ունենալ», և նմանատիպ այլ կեղծ, անհիմն հնչեցրած պնդումները ԵՄԽՎ նստաշրջանում ոչ այլ ինչ են, քան գիտակցված կեղծիքի միջոցով մարդու իրավունքները և ժողովրդավարության արժեքները արժեզրկող գործողություն, որը չի կարող համարվել համատեղելի ժողովրդավարական և իրավական պետության օրենսդիր մարմնի ներկայացուցիչի կարգավիճակի հետ:

Այսպիսով, ՀՀ ԱԺ սույն պատգամավորները իրենց թույլ են տվել միջազգային հարթակում հրապարակային ձևով կատարել այնպիսի խիստ սուբյեկտիվ և կողմնակալ արտահայտություններ «Բաց հասարակության հիմնադրամներ»- Հայաստան գրասենյակի գործունեության վերաբերյալ, որոնք իրենց բնույթով ուղղակիորեն ստվերում են հիմնադրամի ծավալած գործունեությունը, հանիրավի պիտակավորում վերջինիս՝ որպես ազգակործան և պետականության դեմ գործունեություն ծավալող մարմին, ՀՀ-ի բոլոր խնդիրները, այդ թվում նախորդ տարվա ողբերգական կորուստները կապում բացառապես հիմնադրամի գործունեության հետ, և դրանով հանդերձ քողարկում և մոռացության տալիս իրենց, որպես ԱԺ ներկայացուցչի պատասխանատվությունը՝ տեղի ունեցածի և դրանից ելքեր փնտրելու հարցում: Այս ամենը միայն առաջին հայացքից թողնում է ԱԺ պատգամավորի պարտականությունների կատարման տպավորություն, մինչդեռ իրականում որևէ աղերս չունի հետպատերազմյան այս դժվարին ժամանակաշրջանում իրավական և ժողովրդավարական պետության օրենսդիր մարմնի՝ ԱԺ պատգամավորի գործունեության համար հրամայական հանդիսացող պահանջների կատարման հետ, որի համար պետությունը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու, քաղաքացիների խնդիրներին լուծում տալու ջանքերը պետք է հիմնված լինեին բացառապես իրավական և ժողովրդավարական պետության

սկզբունքների հիման վրա, ոչ թե այդ սկզբունքների ոտնահարման ճանապարհով, որն ամբողջությամբ արտահայտվել է նրանց ելույթներում:

Հայաստանի Հանրապետությունը անդամագրվել է Եվրոպայի խորհրդին Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական և իրավական պետության, հաշվետու և թափանցիկ կառավարումն ապահելու համար կարողությունների շարունակական զարգացման նպատակով, ոչ թե այդ սկզբունքները ոչնչացնելու համար: ԱԺ ԲՀԿ խմբակցության պատգամավորներ Միքայել Մելքումյանի և Նաիրա Զոհրաբյանի ելույթները ԵՆԽՎ հունվարյան նստաշրջանում հանդիսանում է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ-ի կողմից վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված ՀՀ քաղաքացիների հանդեպ վերցրած պարտավորությունների էության խեղաթյուրում, որը չի կարող ընդունելի համարվել ԱԺ պատգամավորի կարգավիճակից բխող վարքագծի հետ:

Վերոնշյալով պայմանավորված, գտնում եմ, որ այս ելույթով ՀՀ ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյանը և Նաիրա Զոհրաբյանը ակնհայտորեն խախտել են ՀՀ ԱԺ պատգամավորի վարքագծին վերապահված հստակ կանոնները, քանզի ՀՀ Ազգային ժողովի Կանոնակարգ Սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***Պատգամավորը պարտավոր է պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները:*** Ուստի, սույնով տեսնելով ՀՀ ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյանի և Նաիրա Զոհրաբյանի վարքագծի սահմանազանցումը, դիմում եմ Ձեզ՝ վերջիններիս վկայակոչված վարքագծի վերաբերյալ քննությունը Պատգամավորական էթիկայի հարցերով զբաղվող ժամանակավոր հանձնաժողովի ուսումնասիրությանը հանձնելու, հանձնաժողովի միջոցով վերջիններիս անպատասխանատու վարքագծին համարժեք իրավական գնահատական ու եզրակացություն տալու և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից, հետայսու, նմանատիպ ոչ կոմպետենտ, խիստ սուբյեկտիվ և չհիմնավորված վարքագծային դրսևորումները, հատկապես միջազգային հարթակներում, իսպառ քացառելու հարցով:

## Կից ներկայացնում եմ՝

Միքայել Մելքունյանի և Նաիրա Զոհրաբյանի ելույթների էլեկտրոնային հղումները՝

- <https://personanews.am/article/lurer-hayastanic-hima-evropan-navalnu-hamar-axmuk-e-bardzracnum-isk-arcaxi-turq-adrbejanakan-cexaspanutyune>
- <https://a1plus.am/hy/article/391885>

Հարգանքով,  
Կազմակերպության նախագահ՝



Կատարող՝ Ն. Տեր-Մովսիսյան  
էլ հասցե՝ [ntermovsisyan@hcav.am](mailto:ntermovsisyan@hcav.am)